ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18.04.2015թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ 2015-2019 ուսումնական տարիների /առկա ուսուցման/ և 2015-2020 ուսումնական տարիների /հեռակա ուսուցման/ ուսումնական պլանների կատարման ընթացքի մասին:

   /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում:

   /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

3. ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2015-2016 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:

   /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

4. ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոններում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

5. Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն ստեղծելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

6. Հայոց լեզվի դասավանդման մեթոդները ոչ մասնագիտական կրթամասերում:

/Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

7. Սկսնակ դասավանդողների մենթորության ինստիտուտի կազմակերպումը:

/Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

8. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ ԵՊՀ ԻՄ 2015-2019 ուսումնական տարիների /առկա ուսուցման/ և 2015-2020 ուսումնական տարիների /հեռակա ուսուցման/ ուսումնական պլանների կատարման ընթացքի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը:

Նշվեց, որ 2015թ. փետրվար ամսից մասնագիտական ամբիոնների կողմից սկսվել են 2015 - 2019 և 2015 – 2020 առկա և հեռակա ուսուցման պլանների կազմման նախապատրաստական աշխատանքները: Մասնագիտական

ամբիոնները հիմնականում առաջնորդվել են ԵՊՀ-ի համապատասխան մասնագիտության ուսումնական պլաններով, օգտվել են նաև Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններից:

Մասնագիտական ամբիոնների կողմից քննարկման ընթացքում հաշվի է առնվել ներքին և արտաքին շահակիցների առաջարկությունները: Մասնավորապես, ներքին շահակիցների կողմից հարցումների, հանդիպումների ժամանակ առաջարկություններ են եղել ավելի շատ ժամաքանակ հատկացնել ուսումնական պլաններում մասնագիտական կրթամասի դասընթացներին:

Արտաքին շահակիցների կողմից հանդիպումների քննարկման արդյունքում եղել են առաջարկություններ՝ ավելացնելու պրակտիկայի ժամերը, ինչպես նաև մասնագիտական կրթամասի դասընթացների գործնականի ժամերը և որոշկի ժամաքանակ իրականացնել պրակտիկ ձևով: Մասնագիտական ամբիոններն արդեն ավարտել են համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլանները և ներկայացրել ֆակուլտետների գիտական խորհուրդների քննարկմանը:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդին է ներկայացվել մասնագիտական ամբիոնների կողմից առկա ուսուցման «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» և հեռակա ուսուցման «Պատմություն» և «Հոգեբանություն» մասնագիտությունների ուսումնական պլանները:

Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդին են ներկայացվել առկա և հեռակա ուսուցման «Տնտեսագիտության տեսություն», «Սերվիս» մասնագիտությունների ուսումնական պլանները:

Բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդին է ներկայացվել առկա ուսուցման «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» և հեռակա ուսուցման «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» և «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունների ուսումնական պլանները:

Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդին է ներկայացվել առկա ուսուցման «Կիրառական արվեստ» և «Դիզայն» մասնագիտությունների ուսումնական պլանները: Ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից ուսումնական պլանները մինչև ս/թ ապրիլի վերջը կներկայացվեն մասնաճյուղի գիտական խորհրդին կից մեթոդխորհրդի քննարկմանը, որից հետո էլ մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Արտահայտվեցին – ՈՒՄԿ պետ Ա.Ց. Դավթյանը, ֆակուլտետների դեկաններ և ամբիոնների վարիչներ:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին կատարված աշխատանքները ներկայացնել մեթոդխորհրդի ուսումնասիրմանը:

Որոշեցին

Որոշում 9/1

Ուսումնական պլանները ներկայացնել մեթոդխորհրդի քննարկմանը:

Օրակարգի երկրորդ՝ ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում հարցի վերաբերյալ լսվեց տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Տնօրենը նշեց, որ 2014թ.-ի առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի մեջ կատարվել են որոշ փոփոխություններ, որոք հնարավորություն կտան ավելի արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը (Տես նախագիծը)

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը և այլոք: Ելույթ ունեցողները հավանություն տվեցին տնօրենի մոտեցմանը և առաջարկեցին հաստատել 2015թ.-ի նորմերը:

Որոշեցին

Որոշում 9/2

Հաստատել 2015թ.-ի ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը համաձայն հավելվածի:

Օրակարգի երրորդ՝ ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2015-2016 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը ներկայացրեց ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2015-2016 ուստարվա ընդունելության մասնագիտությունների և քննությունների ցանկը /Հավելված 1/, որը կազմելու համար հիմք է հանդիսացել ԵՊՀ ԻՄ ռազմավարությունը, նախորդ տարիների ընդունելության տվյալները, արտաքին շահակիցների շահերի ուսումնասիրումը, մասնաճյուղի ներքին ռեսուրսների առկայությունը, աշխատաշուկայի զարգացման տենդենցները:

Մասնավորապես նշվեց, որ Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունը հանվել է, որվհետև այդ մասնագիտության պահանջարկը

աշխատաշուկայում նվազել է, իսկ Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա մասնագիտության վերականգնումը հեռակա մասում պայմանավորված է մասնագիտության պահանջարկով:

Արտահայտվեցին – ՈԻՄՎ պետ Ա.Ց. Դավթյան, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Վ. Ցուցույյան, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ.Հ. Զուրաբյան, իրավախորհրդատու Ա. Ս. Հովհաննիսյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացված ցանկի նախագծին, առաջարկեցին առանց փոփոխությունների ցանկը ուղարկել ԵՊՀ գիտխորհրդի հաստատմանը:

Որոշեցին

Որոշում 9/3

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2015-2016 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի ներկայացված տարբերակին:
2. Ներկայացնել ԵՊՀ գիտխորհուրդ հաստատման:

Օրակարգի չորրորդ՝ ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոններում փոփոխություններ կատարելու մասին հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը հիմնավորելով փոփոխության անհրաժեշտությունը հավելեց, որ համապատասխան փոփոխություններ կատարվել են նաև մայր բուհում, և որ մեր կանոններում կատարված փոփոխությունները պայմանավորված են նաև դրանով: Տնօրենը հիմնավորելով կետ առ կետ, նշեց բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական նոր կանոններում.

1. Փոխվել է ուսումնական հաստատության իրավական կարգավիճակը՝ ՊՈԱԿ-ից դարձել է հիմնադրամ:

2. Մասնաճյուղի տնօրենի իրավասություններում կատարվել են որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված տնօրենին տրված հինգ իրավունքներ, կանոնակարգում կրկնվելու պատճառով, հանվել են:
3. Հին կանոնակարգի 4-րդ գլխի 9-րդ հոդվածը հանվել է, որը վերաբերում էր դասախոսների կողմից ուսանողների պարտադիր հաշվառման և նրանց ներկա կամ բացակա նշանակելու գործընթացին:
4. Կանոնակարգի 5-րդ գլխի մի շարք հոդվածներում նույնպես կատարվել են որոշակի փոփոխություններ:
5. Նույն գլխի 8 և 9-րդ հոդվածները նույնպես հանվել են, որոնք վերաբերում էին ուսանողների կողմից լսարանում բջջային հեռախոսներ պահելու և օգտագործելու, քննության ընթացքում ծածկաթերթիկներից կամ բջջային հեռախոսներից օգտվելու հանգամանքին:
6. 9-րդ գլխի 47-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն խրախուսման տեսակների մեջ: Մասնավորապես հանվել է շնորհակալության հայտարարումը, որը փոխարինվել է շնորհակալագրի և մեդալի հանձնման խրախուսանքով:
7. 10-րդ գլխից ամբողջապես հանվել է 52-րդ հոդվածը՝ անորոշ և որոշակի ժամկետով կնքված պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական մեկնաբանությունները:
8. Հին և նոր կանոնակարգերում կարգապահական խախտումների համար նախատեսված տույժերը մնացել են նույնը:
9. Հին կանոնակարգի 11-րդ գլուխը, որը վերաբերվում է ուսանողների հեռացմանն ու ազատմանը տեղափոխվել է նոր կանոնակարգի այլ գլուխներ և հոդվածներ:
10. Հին կանոնակարգի 12-րդ գլուխը, որը վերաբերվում է ուսանողների հետ կապված իրավական հիմքերին, հանվել է:

Եղել է առաջարկություն. մասնաճյուղից հեռացվող ուսանողների վերաբերյալ նախապատրաստվող նյութերը պարտադիր կարգով քննարկման դնել օրինականության ապահովման և ուսանողների իրավունքների պաշտպանման

հանձնաժողովում որի համապատասխան եզրակացությունից հետո միայն ստանա հետագա ընթացք:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ Իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Ա.Ս. Հովհաննիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, արհկոմի նախագահ Ա. Շ. Մարգարյանը:

Որոշեցին

Որոշում 9/4

Հաստատել <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները համաձայն հավելվածի:

Օրակարգի հինգերորդ ՝ ԵՊՀ ԻՄ կազմում Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն ստեղծելու մասին հարցի վերաբերյալ լսվեց տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը կարևորեց ուսման արդյունավետ կազմակերպման գործում ԵՊՀ ԻՄ-ի ներքին և արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրումը և նրաց շահերի արտացոլումը մասնաճյուղի գործունեության մեջ: Մասնավորապես վերջին տարվա ընթացքում կատարված ուսունասիրությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտություն կա մասնաճյուղում բացել անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն:

Արտահայտվեցին – ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը, Իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսքնյանը և այլոք: Ելույթ ունեցողները ևս հիմնավորեցին անգլերենի ուսուցման կենտրոն ստեղծելու

անհրաժեշտությունը, որը կնպաստի մասնաճյուղի առաքելությունների առավել արդյունավետ իրագործմանը:

Որոշեցին

Որոշում 9/5

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստեղծել Անգլերեն Լեզվի Ուսուցման կենտրոն:

Օրակարգի վեցերորդ՝ Հայոց լեզվի դասավանդման մեթոդները ոչ մասնագիտական կրթամասերում հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի զեկույցը ներկայացվում է ամբողջությամբ:

Հայոց լեզվի դասավանդման մեթոդները ոչ մասնագիտական կրթամասերում

Լեզուն հաղորդակցական հմտությունների ձևավորման ու դրսևորման լավագույն միջոցն է, ուստի ուսուցչից հետո նաև դասախոսին է փոխանցվում այն առաքելությունը, որ ուսանողի խոսքի շարունակական մշակումն ու կատարելագործումը պիտի դառնա մեծ կարևորություն ներկայացնող գերխնդիր, որի իրականացումը պահանջում է մեթոդական բազմազան ու հետաքրքիր գործընթացներ: Եվ եթե մասնագիտական բաժիններում այդ խնդիրը լուծելու լայն հնարավորություններ են տրված՝ բոլոր կուրսերում ավելի շատ ժամաքանակով խորացնելու լեզվի իմացությունը և ակնկալելու արդյունք, ապա ոչ մասնագիտական կրթամասերում սակավ ժամաքանակի պարագայում ուսուցման նպատակն ու մեթոդները պիտի ինչ-որ չափով այլ լինեն, ունենան գործնական ուղղվածություն՝գրավոր և բանավոր խոսքը կատարելագործելու միտում:

Խոսքը ունի իր գրավոր և բանավոր տեսակները, որոնք պետք է մշակել բոլոր ժամերին՝ առաջնորդվելով ծրագրով նախատեսված թեմա-ենթաթեմաներով:

Գրավոր խոսք: Գրավոր խոսքը հղկելու նպատակով պիտի ուղղել գրածը, ավելացնել, կրճատել կամ փոխել, դարձնել ավելի գրագետ, նաև ազդեցիկ, պահել մտքի տրամաբանական ընթացքը, կանոնավոր շարադասությունը: Սա պարտադիր պահանջ է, որովհետև բանավոր խոսք ասելուց առաջ երբեմն հարկ է լինում այն նախ գրավոր տեսքի բերել: Իսկ դրա համար լեզվական օրենքների ու օրինաչափությունների պարտադիր իմացությունը ոչ մասնագիտական կրթամասերում արտահայտվում է **գրագրությունների** տեսակներ ուսուցանելիս, տարարնույթ գրավոր հանձնարարականներ վերլուծելիս: Լեզվաիմացությունն օգնում է գրագետ և անսխալ կատարելու պետական-պաշտոնական գործարքները, որը հաղորդակցման ավանդական, աշխարհում ընդունված ժամանակակից ձևերից կարևորագույնն է:

Բանավոր խոսք: Բանավոր խոսքը հղկելը ավելի բարդ է: Այն հետևողական լուրջ աշխատանք է պահանջում: Հարկավոր է ուշադրության կենտրոնում պահել

ա/ասելիքի բովանդակության հարստությունը, տեղեկատվությամբ հագեցած լինելը,

բ/խոսքի հնչերանգը՝ առոգանությունը, ձայնի տոնը, տեմպը, ելևէջումը, ռիթմը,, դադարը,

գ/բառապաշարի հարստությունը. ձևաիմաստային խմբերի գործածությունը, ձևաբանական և շարահյուսական կառույցների բազմազանությունը, արտա-հայտչամիջոցների կիրառությունը,

դ/խոսքի թերությունները վերացնելը /միօրինակություն, ավելորդաբանություն/,

ե/շարունակաբար տալ ստեղծագործական բնույթի հանձնարարություններ,

գ/անցկացնել գրական փոքրածավալ երկերի քննարկումներ, բանավեճեր տարբեր թեմաներով, նկարչական կտավների ու երաժշտական ստեղծագործությունների բանավոր մեկնաբանություններ:

է/ արտահայտիչ ընթերցել դասական գրականության արձակ և չափածո հատվածներ:

Արտահայտվեցին – հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը և հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Ա. Սարհատյանը և այլոք: Ելույթ ունեցողները ևս համակարծիք էին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հետ և նշեցին, որ ոչ մասնագիտական կրթամասերում տվյալ ժամանակի պարագայում ուսուցման նպատակն ու մեթոդները պետք է այլ լինեն, ունենան գործնական ուղղվածություն՝ գրավոր և բանավոր խոսքը կատարելագործելու միտում:

Որոշեցին

Որոշում 9/6

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, ոչ մասնագիտական կրթամասերում <<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի դասավանդման ժամանակ հնարավորինս օգտագործել ուսանողների գրավոր և բանավոր խոսքի զարգացման մեթոդները:

Օրակարգի յոթերորդ՝ Սկսնակ դասավանդողների մենթորության ինստիտուտի կազմակերպումը հարցի վերաբերյալ լսվեց տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը նշեց, որ մասնաճյուղում սկսնակ դասախոսների մասնագիտական գործունեությունը բարելավելու համար անհրաժեշտ է ներդրնել մենթորության ինստիտուտը:

Մենթորությունը գործընթաց է, որի ընթացքում փորձառու, կայացած և հեղինակություն վայելող դասախոսները ուսուցանում, խորհուրդ են տալիս,

ուղղորդում և օժանդակում են սկսնակ դասախոսներին՝ իրենց հովանավորյալներին (մենթիներին):

Մենթորը կանոնավոր կերպով պետք է օգնություն ցուցաբերի սկսնակ դասախոսին աշխատանքային առաջին տարվա ընթացքում: Մենթորը օգնում է ընտելանալու աշխատանքին, ներշնչում ինքնավստահություն, ծանոթացնում բուհի կանոնադրությանը, ներքին կարգ ու կանոնին, ներկայացնում դասավանդման մեթոդները:

Մասնաճյուղում մենթորային հարաբերությունները պետք է լինեն օգնող-օժանդակող հարաբերություններ, որոնք ուղղվելու են նվաճումներն ու ձեռքբերումները զարգացնելուն: Մենթորությունը ներառում է զգացմունքային և հոգեբանական աջակցություն, կարիերային և մասնագիտական զարգացմանը վերաբերող ուղղակի օգնություն և դերային մոդել: Այս հարաբերություններն անձնական են և ենթադրում են ուղղակի համագործակցություն մենթորի և մենթիի միջև:

Տնօրենը այնուհետև նշեց, որ մասնաճյուղում հավանաբար կգործեն մենթորության կազմակերպման հինգ հիմնական տեսակները՝ խմբային, թիմային, հավասարազոր, էլեկտրոնային և անհատական:

Խմբային մենթորության դեպքում մենթորն ունի չորս դասախոսից բաղկացած խումբ և ներկայանում է որպես նրանց առաջնորդ՝ համաձայնելով պարբերաբար հանդիպումներ կազմակերպել նրանց հետ: Այս հանդիպումների ժամանակ մենթորը ներկայացնում է սեփական կյանքի փորձը, ձեռք բերած հաջողությունները, սովորեցնում մենթիներին որոշ հմտություններ:

Թիմային մենթորությունը մի քանի ավագ մենթորների ներգրավվածությունն է մենթիների 1-4 հոգանոց խմբում:

Հավասարազոր մենթորության պարագայում մենթորը հնարավորություն ունի ներգրավելու և /կամ աջակցություն ստանալու ավելի երիտասարդ մենթորից: Վերջինս իր հերթին պետք է անհրաժեշտության դեպքում լրացուցիչ

օժանդակություն ցուցարերի մենթիին՝ պահպանելով իր դրական դերային կերպարը ավագ մենթիի մոտ:

Էլեկտրոնային մենթորությունը հարաբերությունների այնպիսի ձև է, երբ մենթորն ու մենթին միմյանց հետ շփվում են ինտերնետի միջոցով շաբաթական առնվազն մեկ անգամ: Տարվա ընթացքում նրանց առերես հանդիպումը կարող է տեղի ունենալ 1-3 անգամ՝ պայմանով, որ մենթորն ինտերնետի միջոցով պետք է տրամադրի համապատասխան և ամբողջական տեղեկատվություն ու աջակցություն:

Անհատական մենթորությունը մենթորության ավանդական ձևն է, երբ մեկ մենթորին կցվում է մեկ մենթի, և նրանք ամբողջ ուսումնական տարվա ընթացքում անընդհատ կապի մեջ են միմյանց հետ: Մենթորը տրամադրում է արժեքավոր տեղեկատվություն, քննարկում կարևոր հարցեր և տանում ուղղորդիչ աշխատանք:

Արտահայտվեցին – ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա.Վ. Ցուցույանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, ամբիոնի վարիչներ, և այլոք: Ելույթ ունեցողները ևս կարևորեցին մենթորության ինստիտուտի կայացման կարևորությունը և անհրաժեշտությունը, մասնավորապես նշվեց որ այն կնպաստի մասնաճյուղի ռազմավարության արդյունավետ իրականացմանը:

Որոշեցին

Որոշում 9/7

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպել սկսնակ դասախոսների մենթորության ինստիտուտ:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կարգախոս սահմանելու մասին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ուսանողների, դասախոսների,

ինչպես նաև արտաքին շահակիցների կողմից կան բազմաթիվ բազմաթիվ առաջարկներ՝ մասնաճյուղի համար սահմանելու կարգախոս՝ <<ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ>>:

Արտահայտվեցին - մ.գ.թ., դոց. Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոց. Վ. Ավագյանը, Իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը և այլոք:

Որոշեցին

Որոշում 9/8

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար սահմանել կարգախոս՝ <<ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ>>:

Լսեցին – ԵՊՀ ԻՄ- ի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 9/9

Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի նոր կազմը համաձայն հավելված 2-ի:

Լսեցին – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի ռուսաց լեզվի դասախոս բ.գ.թ. դոցենտ Մ.Հ. Զուրաբյանի <<Մ. Բուլգակովի <<Վարպետը և Մարգարիտան>> վեպի պատկերաոճային առանձնահատկությունների արտացոլումը հայերեն թարգմանության մեջ>> մենագրությունը հրատարակման երաշխավորելու հարցը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ <<Օտար լեզուների>> ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին օտար լեզուների ամբիոնի դոցենտ բ.գ.թ. Մ.Հ. Զուրաբյանի <<Մ. Բուլգակովի <<Վարպետը և Մարգարիտան>> վեպի պատկերաոճային առանձնահատկությունների արտացոլումը հայերեն թարգմանության մեջ>> մենագրությունը հրատարակման

երաշխավորելու համար: Ձեռնարկը գրախոսվել է և արժանացել է բարձր գնահատականի:

Արտահայտվեցին – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, օտար լեզուների ամբիոնի վարիչ Ք. Հարությունյանը, ռուսաց լեզվի դասախոսներ:

Նշվեց, որ ձեռնարկը կարող է օգտակար լինել ռուսաց լեզուն ինքնուրույն ուսումնասիրողների համար, ինչպես նաև թարգմանչական աշխատանքներով զբաղվող մասնագետների համար:

Որոշեցին

Որոշում 9/10

Երաշխավորել հրատարակման Մ.Հ. Զուրաբյանի <<Մ. Բուլգակովի <<Վարպետը և Մարգարիտան>> վեպի պատկերաոճային առանձնահատկությունների արտացոլումը հայերեն թարգմանության մեջ>> մենագրությունը:

Լսեցին – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Վ. Աղաբաբյանի <<Սերո Խանզադյանի վիպակներն ու պատմվածքները >> մենագրությունը հրատարակման երաշխավորելու հարցը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ <<Հայոց լեզվի և գրականության >> ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վ. Աղաբաբյանի <<Սերո Խանզադյանի վիպակներն ու պատմվածքները>> մենագրությունը հրատարակման երաշխավորելու համար: Ձեռնարկը գրախոսվել և արժանացել է բարձր գնահատականի:

Արտահայտվեցին – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը, , բ.գ.թ. Հ. Վանյանը, բ.գ.թ. Մ. Սարուխանյանը և այլոք :

Նշվեց, Վ. Աղաբաբյանի մենագրության մեջ Ս. Խանզադյանի վիպակներն ու պատմվածքներն ենթարկվել են հնարավորինս համակողմանի /ժանրային, թեմատիկ-գաղափարական/ քննության: Մենագրությունը նվիրված է Ս. Խանզադյանի ծննդյան 100-ամյակին և կարող է օգտակար լինել գրականագետների, բանասիրական ֆակուլտետի ուսանողների և ընդհանրապես Ս. Խանզադյանի ստեղծագործություններով հետաքրքրվող յուրաքանչյուրի համար:

Որոշեցին

Որոշում 9/11

Երաշխավորել հրատարակման Վահան Աղաբաբյանի <<Սերո Խանզադյանի վիպակներն ու պատմվածքները>> մենագրությունը:

Լսեցին - ԵՊՀ Իմ-ի անգլերեն լեզվի ուսուցման կենտրոնի կարգը հաստատելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 9/12

Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն ուսուցման կենտրոնի կարգը համաձայն հավելվածի 3-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգը հաստատելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 9/13

Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգը համաձայն հավելվածի 4-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանոնակարգը հաստատելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 9/14

Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանոնակարգը համաձայն հավելվածի 5-ի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործավարության կազմակերպման կարգում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Որոշեցին

Որոշում 9/15

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործավարության կազմակերպման կարգում ավելացնել երկու հավելված համաձայն հավելված 6-ի և հավելված 7-ի:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար Մ.Ս. ԱԹՈՅԱՆ